Հայ գրականության օլիմպիադա-2017

Մարզային փուլ

IX դասարան (տևողությունը՝ 150ր.)

1.««Սասունցի Դավթի» ստեղծմանը մասանակցել է ողջ հայ ժողովուրդը, և նրա մեջ վառվում է ժողովրդական հանճարի կրակը: Հայ ժողովուրդը ստեղծեց այս էպոսը իր պատկերի նման՝ իր կյանքի ճշմարտությունը դնելով նրա մեջ»:

ա) Ո՞վ է ասույթի հեղինակը: (1մ.)

բ)Ի՞նչ է էպոսը, ե՞րբ է ստեղծվել հայ ժողովրդի էպոսը. ինչո՞ւ **հենց այդ ժամանակաշրջանում:** **(1,5մ):**

գ)Նշի՛ր աշխարհի ժողովուրդների էպոսներ (առնվազն՝5). ե՞րբ է տեղի ունեցել էպոսների միջազգային մրցույթ. ի՞նչ տեղ է գրավել հայ ժողովրդի էպոսը այդ մրցույթում և ի՞նչ պատվանուն է տրվել նրան: (2,5մ.):

2.Ո՞վ է Վերածնության դարաշրջանի հիմնադիրը հայ իրականության մեջ (1մ.): Ո՞ր դարն է համարվում Վերածննդի դարաշրջանի սկիզբը. ինչո՞ւ (հիմնավորի՛ր փաստերով) (1մ.):

Գրի՛ր մեկ քառատող Նարեկացու որևէ տաղից (ցանկալի է՝ գրաբարով): Պատկերավորման ի՞նչ միջոց է օգտագործել Նարեկացին իր տաղերում (1մ):

3. Շարունակի՛ր….

Առավոտ լուսո Արեգակն արդա՛ր….(մինչև «զա» տառը): (4մ.)

4.Ո՞վ է հայ գրականության մեջ առաջինը գովերգել կնոջ իրական գեղեցկությունը, փառաբանել սերը:

Գրի՛ր երկու նմուշ այդ հեղինակի ստեղծագործությունից: (5մ.):

5.Նկարագրի՛ր ժամանակակից որևէ հերոսի:

Սրտառուչ նամակով ներկայացրու քո հոգեվիճակը քո նախընտրած հերոսին: (3մ.)

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան .